

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր. կրթությունը և դաստիարակությունը դպրոցում  
«Մարդը և աղբը»

Առարկան՝ Բնապահպանություն

Ուսումնական հաստատություն՝ Չարենցավանի Ստեփան Ավանյանի անվան համար 4 հիմնական դպրոց

Չետազոտող՝ Գայանե Մկրտչյան

## Վարկած

Որպեսզի պահպանենք մեր մուլտրակը, դարձնենք Էկոլոգիապես մաքուր, պետք է փոխենք մեր հոգեբանությունը, ապրելակերպը, վարքը: Սովորենք կենցաղային թափոններին նոր կյանք տալ: Այդ դեպքում կունենանք քիչ աղբ, Էկոլոգիապես մաքուր քաղաք, միջավայր... Եթե բնապահպանական կրթության համակարգի շրջանակներում տարվի հետևողական աշխատանք կրտսեր դպրոցականների հետ (ճանաչողական, հետազոտական), ապա կարող ենք հասնել դպրոցականների Էկոլոգիական մշակույթի զգալի աճի:

## Նպատակը

Ձևավորել բնապահպանական վարքագիծ, մշակույթ Էկոլոգիական կրթության և դաստիարակության միջոցով: Բարձրացնել բնապահպանական խնդիրների շուրջ իրազեկվածության մակարդակը դպրոցականների շրջանում:

## Խնդիրները

- Որո՞նք են աղբի առաջացման պատճառները և ինչ ճանապարհով է կատարվում աղբահեռացումը:
- Պարզել որքան ժամանակ է պետք թափոնների քայքայման համար:
- Ուսումնասիրել աղբի տեսակավորման և վերամշակման գործընթացը զարգացած երկրներում:
- Վերլուծել աղբի խնդիրը Հայաստանում:
- Պարզել, թե ինչպես կլուծվի խնդիրը թափոնների վերամշակումից հետո:
- Ինչպես երևակայության միջոցով թափոններին նոր կյանք հաղորդել:
- Կրտսեր դպրոցականների բնապահպանական կրթության զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների համակարգի մշակում:
- Անցկացնել դիտարկումներ, ուսումնասիրություններ, հարցումներ անհրաժեշտ եզրկացության համար:
- Վերլուծել տեղեկատվական աղբյուրները թեմայի շուրջ:

## Ուղղակի թիրախային խոսմբ



Կրտսեր դպրոցականներ

## Անուղղակի թիրախային խոսմբ



Երիտասարդներ, մեծահասակներ (բնակչություն)

## Գործնական նշանակությունը



Ստացված արդյունքները կօգտագործեն իմ մակավորժական գործունեության մեջ՝ տարբեր առարկաների դասավանդման ժամանակ, միջոցառումներին, դասղեկի ժամերին, ծնողական ժողովներին, Էկսկուրսիաներ, արշավներ կազմակերպելիս:

## Մեթոդը



Գրականության վերլուծություն, տեքստերի, լուսանկարների ընտրություն, սոց. հարցումներ, հետազոտություններ:

Աշխատանքը կօգնի հասկանալ, որ թափոնների մի մասը կարելի է նորից օգտագործել՝ սովորական կենցաղային **աղբը** վերածելով **օրիգինալ իրերի**, որը հնարավորություն կտա աղբից ազատվելու գործընթացը դարձնել անվտանգ և արդյունավետ:



# Ներածություն

Բնապահպանությունը միջոցառումների մի համակարգ է, որի նպատակն է պահպանել բնական հարստությունները, նպաստել դրանց վերատադրմանը և ապահովել արդյունավետ օգտագործումը, կանխել բնության վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցությունը, ապահովել մարդու և բնության կենսագործունեության ներդաշնակությունը: Մարդը բնության մի մասն է, նա հազարավոր թելերով կապված է բնությանը: Իր գոյատևման ու բարօրության համար ի սկզբանե մարդն օգտվել է բնությունից, օգտագործել բնության պաշարներն ու բարիքները:



## Մեր ընդհանուր «տունը» երկիր մոլորակն է:

- Նրա վրա կան ծովեր, օվկիանոսներ, լեռներ, անտառներ:



- Նրա վրա ապրում են տարբեր կենդանիներ, թռչուններ, ձկներ:

Բնությունը զարգանում է իր օրենքներով: Նա չի ներում սխալները: Այսօր բնության և ժամանակակից քաղաքակրթության փոխհարաբերությունները բարդացել են: Ժամանակակից մարդը թափանցել է նորանոր միջավայրեր՝ շրջանցելով բնապահպանական պահանջները, առաջացնելով անցանկալի երևույթներ բնության ու մարդկության միջև: Մարդը դարձել է շատ դժբախտությունների պատճառ: Այսօր կապույտ մոլորակը կանգնած է բնապահպանական աղետի եզրին: Ցավալի է տեսնել աղտոտված բնությունը, նա դրանից տառապում է...




- կլիմայի փոփոխություն,



- անտառահատում, թթվաճնի պակաս, անտառային էռոզիա, տափաստանների առաջացում



- օվկիանոսների աղտոտում և ջրահեռացում,
- աղբակույտերի, աղբանոցների շատացում



- կենդանիների և բույսերի հազարավոր տեսակների ոչնչացում, վտանգված տեսակների թվի աճ,
- օգտակար հանածոների և այլ կենսական ռեսուրսների պաշարների կրճատում

Մարդկային հասարակության գերխնդիրն է դառնում բնության խելամիտ օգտագործումը, պահպանումը և մաքուր «նյութական աշխարհի» ստեղծումը:

## Աղբը 21-րդ դարի չարիք

Ցավոք, ինչքան լավ է ապրում մարդը, այնքան շատ է աղբ նետում: Շատանում են աղբանոցները, որոնք զբաղեցնում են զգալի հեկտարներ: Թափոնների մեծ մասը թուղթ ու ստվարաթուղթ է, սև ու գունավոր մետաղ, ապակի: Մետաղների պարունակությունը թափոններում ավելի բարձր է, քան լավագույն հանքավայրերում: Աղբանոցներում այնքան շատ թուղթ կա, որ հազարավոր հեկտար անտառներ կարող են հանգիստ աճել, այլ ոչ թե անխնա հատվել թղթի արտադրության համար: Աղտոտված են օդը, ջուրը, հողը: Խնդիրներ, որոնք լուծում են պահանջում: Հոգսերով ու խնդիրներով ծանրաբեռնված մարդուն չի մնում ժամանակ, որպեսզի ուղղակի նայի շուրջը և մտածի այն մասին, թե ինչ է սպասվում մեր քաղաքակրթությանը ապագայում: Այսօր աղբը բնապահպանության ոլորտում այլևս դարձել է հրատապ լուծում պահանջող խնդիր: Ի՞նչ անել աղբը, որտե՞ղ այն տեղավորել: Բնապահպանական այս խնդիրը գտնվում է կառավարությունների, միջազգային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: Առողջ և մաքուր շրջակա միջավայր ունենալու խնդրով շահագրգռված են բոլորը. և մեծերը, և փոքրերը: Գուցե արժե խնդիրը դիտարկել այլ տեսանկյունից: Ավելի հեշտ չէ՞ վերահսկել այն ամենը, ինչ հայտնվում է աղբավայրում, քան այն, ինչ դուրս է գալիս աղբավայրից դեպի շրջակա միջավայր: Աղբը կարելի է պատկերացնել ոչ թե որպես ավելորդ բան, այլ որպես տարբեր արժեքավոր նյութերի ու բաղադրիչների խառնուրդ: Տեսանելի ապագայում դժվար է պատկերացնել մարդկությունը առանց աղբավայրերի, բայց մեր ուժերից է կախված նվազեցնել թափվող աղբի քանակը: Մի՛ շտապեք դեն նետել կենցաղային աղբը: Եղե՛ք ստեղծագործ և մտածեք դրանք օգտագործելու ուղիների մասին: Եկե՛ք աշխարհը դարձնենք Էկոլոգիապես ավելի մաքուր:

**Եկե՛ք գնահատենք մեզ շրջապատող աշխարհը՝ հանուն ավելի պայծառ ապագայի:**

**Մենք դա կարող ենք...**

**Մենք պատասխանատու ենք...**

«Մարդկությունը չի մեռնի ատոմային ռումբից, անվերջանալի պատերազմներից, նա կթաղվի իր սեփական **թափոնների** լեռների տակ» **Նիլս Բոր**



# Գլուխ 1 Ընդհանուր տեղեկություններ աղբի մասին

Աղբը այն է, ինչ պետք չէ մարդուն այս տեսքով: Աղբը կոչոտ կենցաղային թափոններն են: Թափոնները այն ապրանքներն ու նյութերն են, որոնք կորցրել են իրենց սպառողական հատկությունները ֆիզիկապես հնանալու հետևանքով: Որպեսզի գտնենք աղբի լուծման բանալին, ուսումնասիրենք աղբի առաջացման և հեռացման «ճանապարհային քարտեզը»:

## Աղբի տեսակները և վտանգավորության աստիճանները

Աղբը բաժանվում է մի քանի տեսակի: Դա անհրաժեշտ է առաջին հերթին նրա համար, որպեսզի գտնել այս կամ այն թափոնի վերամշակման կամ թաղման մեթոդը:

### ▪ Թեթև թափոններ

Թղթի թափոններ - շատ վտանգ չեն ներկայացնում  
Սննդի թափոններ - խոհանոցի, սննդի օբյեկտների բոլոր թափոնները: Նրանք շատ շուտ են քայքայվում, նույնիսկ եթե հաշվի առնենք, որ այսօրվա սննդի մեջ շատ քիչ են բնական բաղադրիչները և ավելի շատ՝ քիմիական:  
Ապակյա թափոններ - «Արհեստական թափոնների» ամենահին տեսակը, չեն վնասում և չեն կեղտոտում օդը, բայց կարող են երբեմն վնաս հասցնել կենդանիներին և մարդուն (կենցաղային ապակի):

### ▪ Միջին ծանրության թափոններ

Պլաստիկ թափոններ - առաջացնում են թունավոր նյութեր, ինչը վնաս է պատճառում մարդուն: Մի քանի տեսակներ նույնիսկ համարվում են «իսկական մարդասպաններ»: Ընկնելով օվկիանոսները, նրանք վերացնում են միլիոնավոր ծովային օրգանիզմներ: Ջրային թռչունները չեն տարբերում պլաստիկ մնացորդները սննդից և մեռնում են օրգանիզմի թունավորումից:  
Մետաղական թափոններ - նավթամթերքներ, որոշ քիմիական, շինարարական և տրանսպորտային թափոններ: Այս բոլորը թունավորում են միջավայրը շատ ուժեղ, բայց շատ արագ քայքայվում են:

### ▪ Ծանր թափոններ

Սրանք վտանգավոր թափոններ են, որոնք պարունակում են սնդիկ՝ ջերմաչափ: Սնդիկը համարվում է առաջին աստիճանի վտանգավորության: Նրանք հավաքվում են հերմետիկ թափոն-ամաններում, պիտակավորվում և պահվում: Նրանց վերամշակումը արդյունավետ չէ:  
Ռադիոակտիվ թափոններ - առաջ են բերում մահ, ավերածություն, նույնիսկ առանց շփման էլ վտանգավոր են:  
Մարտկոցներ - կենցաղային, արդյունաբերական, տրանսպորտային մարտկոցները թունավոր թափոններ են:

## Աղբի առաջացման աղբյուրները

Աղբի առաջացման պատճառները տարբեր են, բայց գլխավոր աղբյուրը համարվում է մարդու գործունեությունը:

### Աղբի հիմնական աղբյուրները

- Մարդ
- Տրանսպորտ
- Արդյունաբերական ձեռնարկություններ
- Խանութներ
- Կենդանիներ

Գիտնականների ունեցած տվյալների համաձայն երկրագնդի յուրաքանչյուր բնակչի բաժին է ընկնում տարեկան մոտավորապես 1 տոննա աղբ, իսկ ընդհանուր կտրվածքով՝ 5 մլրդ. տոննա:

## Աղբի ֆիզիկական վիճակը

Ըստ ֆիզիկական վիճակի, աղբը կարող է լինել՝ կոշտ, հեղուկ և գազային:

Ըստ ծագման աղբյուրի լինում են կենցաղային, որոնք կուտակվում են տանը և արդյունաբերական՝ գործարանների և ֆաբրիկաների գործունեությունից առաջացած թափոններ: Աղբի ամենատարածված տեսակը կոշտ կենցաղային թափոններն են, փայտյա, մետաղյա, ապակյա առարկաները:



# Ի՞նչ է լինում աղբի հետ

Որքան մեր կյանքը դառնում է բարեկեցիկ, ավելանում են մեր սպառման ծավալները, այնքան ավելի շատ աղբ ենք առաջացնում: Իսկ ու՞ր են գնում այն ապրանքները, որոնք մեզ այլևս պետք չեն՝ սկսած սննդից, հագուստից, բժշկական, գյուղատնտեսական թափոններից: Այնտեղ, որտեղ թափոնները չեն կառավարվում, մեծ վտանգ են ներկայացնում մարդկանց առողջության և շրջակա միջավայրի համար:



Շատերը վստահ են, որ աղբը, որից ամեն օր ազատվում են՝ առանց հետքի անհետանում է: Սակայն թափոնները ոչ մի տեղ չեն անհետանում, որպես կանոն դրանք բեռնատարով տեղափոխվում են մոտակա աղբավայր: Բայց իրականում թափոնները բուժմերանգի նման վերադառնում են մեզ՝ առողջության համար վտանգավոր նյութերի տեսքով:



# Գլուխ 1.1 Շրջակա միջավայրում տարբեր տեսակի թափոնների քայքայման ժամանակահատվածը



Ուտելիքի մնացորդը նվազագույն վտանգավոր է, պատշաճ և ժամանակին հեռացնելու դեպքում ոչ միայն վտանգ չի ներկայացնում բնությանը, այլև կարող է պարարտանյութ հանդիսանալ:

## Գլուխ 1.2 Աղբի բացասական ազդեցությունը

- Աղբավայրորում աղբը երկար է մնում և աղտոտում շրջակա միջավայրը:
- Աղբավայրերը թունավորում են օդը, ջուրը, հողը:
- Կուտակված աղբը առաջացնում է մեծ քանակությամբ թունավոր նյութեր, որոնք բազմաթիվ վտանգավոր հիվանդությունների պատճառ են դառնում:
- Վերածում է շրջակայքը անմխիթար վիճակի:
- Նվազեցնում է բերքատվությունը:

### Աղբը հեռացնում են մի քանի եղանակով.

- **Աղբի թաղում** - մատչելի, էժան եղանակ է ազատվելու թափոնից, սակայն երկրի ռեսուրսները սահմանփակ են, իսկ թափոնները՝ շատ և նրանք չեն հասցնում վերամշակվել բնական ճանապարհով:
- **Այրում** - Աղբի այրման դեպքում առաջանում են թունավոր նյութեր օդում, որոնք առաջ են բերում ալերգիկ և քաղցկեղային հիվանդություններ:

Մասնագետները հաշվարկել են, որ 10-15 տարի հետո, եթե համապատասխան միջոցներ չձեռնարկվեն, ապա աղբը **5 մետր հաստությամբ** կծածկի կապույտ մոլորակը:

Այս ամենից պարզ է դառնում, որ աղբից ազատվելու համար պետք է գտնել ավելի ապահով լուծում: Լավագույն եղանակը աղբի **տեսակավորումն է**: Ինչու?:

# Գլուխ 1.3 Տեսակավորում և վերամշակում

Աղբի տեսակավորումը հնարավորություն կտա հետագայում վերամշակումից հետո ստանալ երկրորդական հումք, որը կօգտագործվի այլ նպատակներով: Արդյունքում կունենանք ձրի հումք և մաքուր միջավայր (քիչ աղբ): Դա էապես կնվազեցնի աղբավայր տեղափոխվող աղբի ծավալը: Այդ նպատակով օգտագործվում են աղբի տեսակավորման թափոն-ամաններ (փողոցներում, տանը):



Տեսակավորումը պետք է սկսել տանից: Տանը տեսակավորված աղբը թափվում է համապատասխան թափոն-ամաններում: Տեսակավորված աղբը ուղարկվում է համապատասխան վայրեր: Կենցաղային թափոնների գրեթե մեծ մասը կարելի է տեսակավորել և կրկնակի օգտագործել: Նրանք դառնում են ոչ թե սովորական աղբ, այլ երկրորդական հումք: Երկրորդական հումք համարվում են թղթի թափոնը, ապակյա շշերը, տարաները, պլաստմասե առարկաները, հին հագուստը, կոշիկը և սննդի մնացորդները:

Գործընթաց, երբ թափոնները վերափոխվում են նոր նյութերի և առարկաների: Նյութի վերամշակման հնարավորությունը կախված է նրա սկզբնական հատկությունները վերականգնելու կարողություններից: Վերամշակումը կանխում է օգտակար նյութերի վերածումը թափոնի, կրճատում թարմ հումքի օգտագործումը, էներգիայի օգտագործումը, օդի աղտոտումը (այրում), ջրի աղտոտումը (թաղում):



## Ինչպես ազատվել թափոններից

Ի՞նչպես կարելի է օգնել բնությանը: Ահա մի քանի եղանակ:

- Նախընտրիր որակով և երկարաժամկետ ապրանքներ, ոչ թե միանգամյա օգտագործման:
- Եթե գնում ես խանութ, վերցրու քեզ հետ կտորից պայուսակ, որպեսզի չգնես պոլիէթիլենային տոպրակ:
- Ձեռք բեր ապրանքներ, որոնք իսկապես քեզ պետք են:
- Տուր հին իրը (հագուստ, տեխնիկա, զարդեր) նրան, ում պետք կգա, մի՛ թափիր:
- Հավաքի՛ր մետաղ, թուղթ և տուր հանձման կետեր, կամ էլ տուր այն մարդկանց, ովքեր զբաղվում են այդ գործով:
- Իմացի՛ր վտանգավոր թափոնների վերամշակման վայրերը և հանձնի՛ր (մարտկոց, լամպ և այլն):

# Գլուխ 1.4 Չարգացած երկրներում աղբի լուծման ճանապարհները

## Շվեդիա

Շվեդիան այն զարգացած երկրներից է, որն արդեն երկար ժամանակ տեսակավորում և վերամշակում է աղբը: Շվեդական ճարտարապետները և դիզայներները խոհանոցի, բնակարանի նախագծման ժամանակ նախօրոք նախատեսում են այն տեղերը, որտեղ պետք է տեղադրել աղբի բոլոր տեսակների թափոն-ամանները: Յուրաքանչյուր տան մոտ կան տարաներ, որոնցից յուրաքանչյուրը նախատեսված է որոշակի թափոնի համար և այն աղբի՝ որը հնարավոր չէ հեռացնել: Աղբը հատուկ բեռնատարով տարվում է նախնական հավաքման վայրեր: Աղբատար մեքենաները շաբաթվա տարբեր օրերի հավաքում են տարբեր տեսակի աղբ, իսկ առանձնատներում ապրող բնակիչները այդ օրվա դուրս բերվող աղբը դնում են ճանապարհի եզրին: Ժամանակավոր պահեստարաններից ժամանակակից տեխնոլոգիաների օգնությամբ հավաքված աղբը տարվում է համապատասխան ստորգետնյա տերմինալներ, որտեղից էլ գնում է վերամշակման: Հետաքրքիր է, որ շվեդական մանկապարտեզներում գոյություն ունի մեկ առարկա, որ կոչվում է «Աղբի տեսակավորում»: Փոքրիկները սովորում են ինչպես կարտոֆիլի, բանանի կեղևներից և այլ սննդամթերքներից ստանալ պարարտանյութ և դրանցով պարարտացնել այգիները և բանջարանոցները: Երեխան անգամ գիտի կենֆետի թուղթը որտեղ նետել: Նման բացատրական աշխատանքը շարունակվում է դպրոցներում, համալսարաններում: Շվեդիան այն երկիրն է, որն աղբի շնորհիվ ապահովում է ստաբիլ եկամուտ պետական բյուջե: Ամբողջ աղբը ենթակա է վերամշակման: Սխալ տեսակավորման համար քաղաքացիները տուգանվում են 50-2500 եվրոյի սահմաններում:

## Գերմանիա

Գերմանիան առաջինն է տեղադրել թափոն-ամանները: Ներկայումս Գերմանիան համարվում է Եվրոպայում առաջատարը կենցաղային թափոնների վերամշակման ուղղությամբ: Երկու երրորդը վերամշակվում է երկրի ներսում, վեցերորդ մասը արդահանվում է ուրիշ երկրներ, մյուսը մասը վառվում է՝ էներգիա ստանալու համար: Հետաքրքիր է, որ Գերմանիայում օրենսդրական մակարդակով գերմանական ընկերություններից պահանջվում է փորձել նվազեցնել իրենց ապրանքների փաթեթների չափը, ինչպես նաև ներմուծվել է նրանց համար թափոնների հեռացման պարտադիր վճար: Արտադրողներից պահանջվում է արտադրել ինքնուրույն քայքայվող փաթեթավորում կամ վերամշակվող փաթեթավորում: Յուրաքանչյուր միկրոշրջանում կան կենցաղային բաքեր, որտեղ գերմանացիները, որպես կանոն, շաբաթ օրերին տանում են տարբեր խոշոր իրեր՝ (դրանք արգելվում է նետել սովորական տարաների մեջ) կենցաղային տեխնիկա, կահույք: Այդ կենցաղային իրերը կարող է անվճար վերցնել յուրաքանչյուր քաղաքացի: Վերամշակման համար ոչ պիտանի թափոնները օգտագործվում են էներգետիկայի ոլորտում որպես վառելիք: Այսօր Գերմանիայում գործում են 100-ից ավելի կայաններ, որոնք նախատեսված են ավելի քան 18.000.000 տոննա աղբ հեռացնելու համար: Այդ երկրում տարեկան հավաքվում է «ընդամենը» 14.000.000 տոննա աղբ, որպեսզի այդ կայանները աշխատեն մնացած աղբը ձեռք է բերվում այլ երկրներից: Նրանք վճարում են Գերմանիային՝ իրենց աղբից ազատելու համար: Ստացվում է, որ Գերմանիան աղբից ոչ միայն ջերմություն և էլեկտրաէներգիա է ստանում, այլև դրա համար եկամուտ ստանում:

# Հոլանդիա

Հոլանդիայում վաղուց ձևավորված է աղբի տեսակավորման մշակույթը, բարձր է բնակչության Էկո-մակարդակը: Յուրաքանչյուր շենքի դիմաց դրված են տեսակավորված թափոն-ամաններ: Նրանք ամուր փակվում են՝ թափառող կենդանիներից պաշտպանելու և տիպիկ հոտից խուսափելու համար: Երբեմն կարող է ստուգվել բնակչի աղբը և եթե պարզվեց, որ սխալ է տեսակավորված՝ տուգանում են:

Աղբը տեղափոխում են աղբի գործարաններ, որտեղ ստուգվում է ռադիոակտիվ նյութերի առկայությունը աղբի մեջ, այնուհետև տեղի է ունենում տեսակավորում: Տարբեր աշխատակիցներ ձեռքով միկրոպից հանում են խոշոր առարկաները, մագնիսի օգնությամբ հանում են սև մետաղների ջարդոնները (որը վաճառվում է մետալուրգիական գործարաններին), ապա ընտրում իրենց անհրաժեշտ թափոնները: Հաջորդ ֆայլը վերամշակումն է:

Հետաքրքիր է, որ Հոլանդիայում վարժեցրել են նաև ագռավներին, որոնք մաքրում են շրջապատը ծխախոտի մնացորդներից: Ագռավը վերևից նկատելով ծխախոտի մնացորդը, կտուցով վերցնում ու նետում է նախատեսված աղբամանի մեջ և դրա դիմաց ստանում ընկույզ՝ մեկ ծխախոտի մնացորդը = մեկ ընկույզ: Հոլանդիայում կան խանութներ (երկրորդ ձեռքի խանութներ), որոնք բանակիչներից անվճար վերցնում են կահույք, մահճակալ, հին հեռուստացույց և մատչելի գնով վաճառում: Ապրանքները տեղափոխելու համար նախապես պայմանավորվում են և նշված օրը մեքենան փողոցից վերցնում է իրը և տանում: Հոլանդիան կատարյալ մաքուր, քիչ աղբ ունեցող երկրներից է:

## Հետևություն

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ զարգացած երկրներում աղբի խնդիրը մեծ մասամբ լուծված է և այդ գործում մեծ դեր ունի ազգաբնակչությունը, որն աչքի է ընկնում, բարձր Էկոլարքագծով և պատասխանատվությամբ: Էկոդաստիարակության հիմքերը դրվում են հենց նախադպրոցական տարիքից:




# Գլուխ 1.5 Աղբի խնդիրը Հայաստանում

Հայաստանի Էկոլոգիան վատ վիճակում է, ինչը պայմանավորված է բնական ռեսուրսների գերօգտագործմամբ: 2008 թվականին Հայաստանում ձևավորվել է 11.000.000 տոննա թափոն: 2019 թվականին 590.000 տոննա աղբ է թափվել, որից 310.000 տոննան միայն երևանում (ըստ ՅուՆԷՍԿՖի): Տարեկան կուտակվում է 5000 տոննա պոլիէթիլենային թափոն: Ըստ վերջին տարիների միջինացված տվյալների՝ ՀՀ տարածք տարեկան ներմուծվում է ավելի քան 622 տոննա և արտադրվում 201 տոննա պոլիէթիլենային տոպրակ: Ամենամեծ աղբավայրը Նուբարաշենում է: Հանրապետությունում կա 23 պոչամբար, 450 աղբավայր: Աղբավայրերում տեղադրվող աղբի ծավալներն ու բաղադրությունը հայտնի չեն, աղբավայրերում խիստ կառավարում չի իրականացվում, կամ էլ իրականացվում է սահմանափակ ծավալով: 2004 թվականի նոյեմբերի 24-ին ՀՀ կառավարությունը ընդունել է օրենք թափոնների մասին, օրենքը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտագործման հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելումը: Հայաստանում հիմնականում տեսակավորման և վերամշակման գործընթացը բառիս բուն իմաստով վատ վիճակում է: Աղբավայրերում հայտնված աղբը անկառավարելի է: Այս ամենին ավելացնենք բնաչության ցածր Էկո-կուլտուրան, ձևավորված չէ աղբի տեսակավորման մշակույթը: Անփութություն, անտարբերություն, անկառավարելի վարք, ոչ պատշաճ պետական վերահսկողություն, օրենքների բացակայություն: Գրեթե բոլոր մարզերում ամենուր և ամեն տեղ թափված աղբ է, դա տհաճություն և ամոթ է առաջացնում: Ամոթ, որովհետև դա արել ենք մենք՝ մարդիկ: Յուրաքանչյուրը պետք է գիտակցի, որ երկիրը սիրում են ոչ թե բառերով, այլ՝ գործով: Մաքրությունը սկսվում է մեզանից, շրջապատող միջավայրից, այն վայրից, որտեղ ապրում ենք, աշխատում, սովորում:

**Փորձեցի պարզել, թե ինչպես են օգտվում Ավան-Առինջ համայնքի առաջին միկրոշրջանի շենքերի բնակիչները (տարբեր տարիքային խմբի) փողոցներում տեղադրված թափոն-ամաններից:**

## Սոցիալական դիտարկում





Սոցիալական հարցման արդյունքները ցույց տվեցին, որ բնակիչների մոտ ցածր է տեսակավորման համար նախատեսված թափոն-ամաններից օգտվելու մշակույթը, հիմնականում ակտիվ էր երիտասարդությունը. 50%-ը տանը տեսակավորված աղբը նետում էր համապատասխան թափոն-ամանների մեջ, 30%-ը երբեմն էր տեսակավորված աղբը նետում թափոն-ամանների մեջ, 20% օգտվում էր թափոն-ամաններից, բայց կափարիչները չէին փակում, իսկ եթե կափարիչները փակ էին, չէին փորձում բացել. «ես այն չեմ բացի, և նաև չեմ փակի», տեսակավորված աղբը նետում էին ընդհանուր աղբամանը: Ամենապասիվը դպրոցականներն էին, իսկ մեծահասակները պատճառաբանում էին, որ թափոն-ամանները շենքից հեռու են, դրա համար չեն օգտվում:

Հայաստանում վտանգավոր թափոնների (սնդիկային և ֆոսֆորային լամպեր, մարտկոցներ, ներարկիչներ, գազայրիչներ) կուտակման կամ վնասագերծման համար նախատեսված վայրեր չկան: Արտասահմանում սյունների վրա արկղեր են ամրացված, որի մեջ հավաքում են մարտկոցները: Մեզ մոտ մարդիկ տանն են պահում, կարգավորող օրենսդրություն չկա և ամեն վտանգավոր բան կարող է հայտնվել աղբավայրում:



Նուբարաշենի աղբավայր՝ քաղցկեղ երևանի սրտում

## Վերամշակման գործընթացը Հայաստանում

2019-ին Հայաստանում 590,000 տոննա աղբ է թափվել, որից 310,000 տոննան՝ միայն երևանում: Հայաստանը թափոնների կառավարման խոշոր բարեփոխումներ է իրականացնում և քաղաքացիները կարող են օգնել երկրին հաջողել այս գործը, ինչու՞: Որովհետև թափոնների պատշաճ կառավարումն ունի բազմաթիվ օգուտներ՝ տնտեսական (աշխատատեղերի ստեղծում, զբոսաշրջության վրա դրական ազդեցություն, ռեսուրսների արդյունավետ կառավարում), հանրային առողջապահական (առողջության ռիսկերի նվազում՝ հողի, ջրի և օդի աղտոտվածության նվազեցման միջոցով) և բնապահպանական (ջերմոցային գազերի արտանետումների կրճատումը, վտանգավոր թափոնների աղտոտվածության նվազում) օգուտներ:

Ըստ ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի ուսումնասիրության, տարեկան Հայաստանում արտադրվում է շուրջ 6,000 տոննա պլաստմասսե վերամշակվող թափոն: Խնդրի աղբյուր լինելու փոխարեն, այն կարող է նաև դառնալ եկամտի և աշխատատեղերի աղբյուր: Թափոնների այդ ծավալը կարող է բերել 5-6 միլիոն ԱՄՆ դոլարի եկամուտ քաղաքապետարանների, ազգային արգելոցների և գործընկեր ընկերությունների համար՝ յուրաքանչյուր 1,000 տոննա թափոնների համար ոլորտում ստեղծելով 10-15 աշխատատեղ:

Հայաստանում կան մի շարք ձեռնարկություններ, որոնք սեփական նախաձեռնությամբ զբաղվում են թափոնների վերամշակմամբ:

«Գրանդ Քենդի» ընկերությունը անսպառ կարող է թուղթ վերամշակել:

- Աբովյան քաղաքում երկու հայ երիտասարդների ջանքերով բացվել է անվաղողերի վերամշակման գործարան: Գործարանը անվաղողերի վերամշակումից ստանում է դիզել վառելիք, (11 տոննա անվաղողից՝ 4-5 տոննա վառելիք) գործարանում աշխատում է 30 մարդ:

## Հետևություն

Միակ անվտանգ քաղաքակիրթ մոտեցումը տեսակավորումն ու վերամշակումն է: Դա մի գործընթաց է, երբ թափոնները տեսակավորվում են և վերափոխվում նոր նյութերի, առարկաների: Պատկերավոր՝ երբ աղբը վերադառնում է խանութների դարակներ՝ գրքերի, ծաղիկների, Էկոլոգիական մաքուր պայուսակների, շինարարական նյութերի տեսքով:

### Ի՞նչ կշահենք

Ստացվում է, որ, եթե մենք օգտագործենք այն ամենը, ինչը անխնա թափված է մեր շուրջը, աղբանոցներում, ապա կարիք չի լինի նոր հանքավայրեր ուսումնասիրելու և դրանց արդյունահանմամբ զբաղվելու՝ հսկայական գումարներ ծախսելով՝ նոր վերքեր հասցնելով բնությանը: Չարգացած երկրներում թափոնները տեսակավորում են, տեղափոխում են, վերամշակում երկար տարիներ: Աղբը համարվում է եկամտաբեր գործ:

### Եզրակացություն

- Թափոնների վերամշակումը թույլ կտա կրճատել թափվող աղբի քանակը, ինչը նշանակում է աղբավայրերի քանակի նվազում:
- Թափոնների վերամշակումը ենթադրում է նոր աշխատատեղեր:
- Բնական ռեսուրսների պահպանում, մաքուր միջավայր:
- Ձրի հոլմք → արտադրանք → եկամուտ

Պատվերը սա է՝ դու հոլմք ես, դու փող ես

## Չնայած այս ամենին, Հայաստանում կան դրական տեղաշարժեր

- Կառավարությունը մշակել է ռազմավարության ծրագիր (2017-2036 թթ), ըստ որի ՀՀ-ի ողջ տարածքում պետք է ստեղծվեն կոշտ կենցաղային թափոնների կառավարման ԵՄ չափանիշներին բավարարող ինտեգրված համակարգ, որը տեխնիկական, ֆինանսական և բնապահպանական առումներով կայուն և ծախսարդյունավետ ծառայություններ է տրամադրելու բնակչությանը և հիմնարկներին: ՀՀ-ում պատշաճ աղբահանություն իրականացնելու համար պետք է 90.000.000 եվրո: Շվեդացի մասնագետները Յակոբյան բնապահպանական կենտրոնի հետ միասին ուսումնասիրել են Հայաստանի աղբանոցներում թափոնների բաղադրությունը (5 տոննա): Հետազոտությունները ցույց են տվել, որ աղբի բաղադրության 60% խոհանոցային թափոններն են: Երբ այն կուտակվում է աղբավայրում, դառնում է մեթան՝ ջերմոցային գազ և արագ նպաստում կեղտաջրերի առաջացմանը, որը ներծծվում է հողում և ստորգետնյա ջրերն է աղտոտում: Եթե օրգանական աղբը դուրս գա, աղբավայրերը կբեռնաթափվեն, գազեր չեն առաջանա և հեշտ կառանձնացվեն չոր վերամշակելիները և դա կլինի հումք, ոչ թե թափոն: Նշանակում է օրգանական թափոնները պետք է առանձնացնել տներում: Եթե այս հարցը լուծվի, քիչ աղբ կուղարկվի աղբավայր: Քանի որ խոհանոցային թափոնները գերակշռող են, կարգախոսը պետք է լինի **«Գնիր այնքան, որքան կսպառես»**
- Քաղաքում գործում են 2020թ դեկտեմբերից երեք տիպի թափոն-ամաններ՝ 135 կետերում: Նախաձեռնությունը շուտով կմեկնարկի Լոռվա մարզի համայնքներից մեկում:
- Երևանի 50 դպրոցներում մեկնարկել է «Աշխարհն՝ առանց թափոնների» ծրագիրը: Գործունեության առանցքը թափոնները հավաքելը, վերամշակելը գործնականում կիրառելն է և համապատասխան ավանդույթի ձևավորումը: Էկո ակումբները ստեղծվել են Եմ դրամաշնորհների շնորհիվ: Նրանց նպատակը երիտասարդ սերնդին բնապահպանական գիտելիքների և Էկո-վարվելակերպի ընդլայնումն է:
- 2020 թվականին ստեղծվել է «Էկո Աղբ» քաղաքացիական նախաձեռնությունը, որը զբաղվում է թափոն-ամանների տեղադրման հարցերով: Կազմակերպիչները իրականացնում են Էկոկուրսիաներ, մշակութային միջոցառումներ, համատեղ ուսուցում:

**«Այն թե ինչպես ենք վերաբերվում մեզ շրջապատող միջավայրին, հայելու է ֆեկտիվությանը ցույց է տալիս մեր հոգին, մեր մտածելակերպը ու առհասարակ վերաբերմունքը երկրի հանդեպ: Աղբը գետնին չզցող ու աղբը տեսակավորող անձը նաև շատ լավ ծնող է, շատ լավ հարկ վճարող է և մտահոգ քաղաքացի»:**

Էկո Աղբ նախաձեռնության ղեկավար՝ Վահե Սալամյան:

- Առաջիկայում նախատեսվում է ստեղծել աղբի տեսակավորման կայան:
- Շվեդացի մասնագետներն ցանկանում են ներդրումներ անել Հայաստանում աղբի վերամշակման համար:
  - Որոշում է կայացվել 200.000 հազար դրամ տուգանք սահմանել աղբը սխալ տեղում թափելու համար, նախագիծը գտնվում է քննարկման փուլում:
  - Շուտով քաղաքում կավելանա փոքր աղբամանների քանակը: Նախատեսվում է 1000 նոր աղբաման տեղադրել կանգառասրահներում և հանրային այլ տարածքներում:


2019թ տվյալներով Երևանում մեկ մարդ տարեկան առաջացնում է 300կգ թափոն, իսկ մարզերում՝ 220կգ: Եթե Հայաստանում կյանքի միջին տևողությունը համարենք 73 տարի, ապա կստացվի, որ մեկ մարդը ամբողջ կյանքում միջինում 20.000կգ աղբ է առաջացնում:

# Գլուխ 2 Աշխարհում ավելորդ իրեր չկան: Նոր կյանք թափոններին

«Այն, ինչ բավական երկար էք պահում, կարելի է դեն նետել: Հենց ինչ-որ բան դեն նետեք, այն ձեզ պետք կգա»:  
Արթուր Բլոխ


Յուրաքանչյուր տանը հավաքվում են մեծ թվով ավելորդ, ոչ պիտանի իրեր՝ սկսած հին թերթերից և ամսագրերից, դատարկ թիթեղյա տարաներից, սննդի մնացորդներից, վերցրած հնամաշ հագուստից, ջարդված ամանից և շարքից դուրս եկած տեխնիկայից: Մի ակնթարթում այդ ամենը պատրաստում ենք նետել աղբի դույլը: Բայց մի պահ կանգ առնենք և փորձենք գտնել թափոնների գործածման օրիգինալ եղանակներ, երկարացնել նրանց կյանքը:  
4-րդ դասարանի աշակերտները փորձեցին պարզել, թե ինչ կա իրենց աղբի դույլում և որ թափոններն են ավելի շատ: Ծնողների հետ միասին պատասխանեցին այն հարցին, թե արդյոք կրկնակի օգտագործում են կենցաղային թափոնները տնտեսության մեջ:

Հարցումներից երևաց, որ դույլում ամենաշատը թղթի, պլաստիկ շշերի, ապակե տարաների և սննդի թափոններն են, որովհետև հյուլթ, շուր գնում են ապակե կամ պլաստիկ շշերով, իսկ ուտելիքը փաթեթավորված է:



# ՀԱՐՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ

- Թղթի թափոնների հանձման կետեր
- Ապակե տարաները օգտագործում են պահածոներ փակելու համար
- Պլաստիկ շշերը տարբեր հեղուկների պահման համար
- Տորթի, կաթի, հյուլթի տուփերը օգտագործվում են սածիլների համար (որպես ամաններ)
- Հին կոմպյուտերային դիսկերը՝ դեկորատիվ նպատակով
- Վերը նշվածներից բոլորը նետում են աղբանոց



Հարցման մասնակիցների 57%-ը թափոնները նետում է աղբանոցը: Դա խոսում է այն մասին, որ ոչ բոլորն են դրսևորում Էկո-վարվելակերպ, Էկոմտածողություն: Մեր մտածողությունից, արարքներից, ապրելակերպից է կախված այն, թե ինչպիսի երկիր, քաղաք, միջավայր կունենանք մենք: Եկե՛ք փոխենք մեր հոգեբանությունը: Մենք դա կարող ենք...

Հի՛շե՛ք. 100կգ թղթի թափոնը պահպանում է 1 ծառ: 23, 55, 5կգ թղթի թափոնը պահպանում է 25 ծառ: Եթե միջին հաշվարկով 4 մարդ նետում է դոկյոն օրը 500գ. թուղթ, շաբաթը՝ 4կգ, ամիսը՝ 13կգ թուղթ, տարին 160կգ - նշանակում է 1 ընտանիքը 1 տարում կարող է պահպանել 16 ծառ:

**Արդյունքում կունենանք մաքուր բնություն և խնայողություն:**

## Գլուխ 2 Բնապահպանությունն ու հոգեբանությունը

«Չոգին զգում է բնությունը, քանզի ինքը՝ հոգին հենց բնությունն է» **Ջեզեյ**

Մենք ուզում ենք երկար ապրել և չհիվանդանալ, շնչել մաքուր օդ, սնվել բնական և անվտանգ մթերքներով: Մենք հույս ունենք, որ մեր երեխաներն ու թոռներն կկարողանան անտառում ձնծաղիկ տեսնել և լողալ այն գետում, որտեղ մենք ենք լողացել, երբ փոքր էինք: Եվ, այնուամենայնիվ, մեզանից շատերն լրջորեն չեն էլ խորհում այն մասին, թե ինչ է կատարվում մեր մոլորակի հետ, մեր շրջապատի հետ, մեզ հետ:

«Գոյություն ունի այսպիսի կանոն՝ առավոտյան արթնանալուց, լվացվելուց, քեզ կարգի բերելուց հետո կարգի բեր նաև քո մոլորակը»: Փոքրիկ Իշխանի այս հրաշալի ուղերձը հոգեբանական տեսանկյունից կինչի այսպես՝ պետք է ընկալել շրջակա աշխարհը ինչպես մեզ վստահված աշխարհ, իսկ հարաբերությունները նրա հետ՝ իբրև անձնային աճի ճանապարհ և հնարավորություն: Ո՞րն է մեր մոլորակը և ի՞նչ է բնապահպանությունը, եթե ոչ՝ մենք, մեր հոգեկան աշխարհն ու հոգեկան առողջությունը: Չտուևաբար, մեր նպատակն է ձևավորել մեր երեխաների մեջ, այսպես ասած Էկոգիտակցություն: Գիտակցություն, որը կոչնի հասկանալ, որ մենք ինքներս ենք պատասխանատու մեր միջավայրի մաքրության և առողջության համար: Չոգեբանական հետազոտությունները վկայում են, որ մարդ-միջավայր կապը ձևավորվում է ուղեղում մանկուց: Չետաքրքիր է նաև այդ կապի գործելու մեխանիզմը, երբ հարցը վերաբերվում է օրգանիզմի կենսաբանական պահպանմանը, միանում են մեր ուղեղի մտածողական գործընթացները: Նրանք սկսում են վերլուծել միջավայրը և արագ գտնել մեր կյանքին սպառնացող փաստերը: Եվ եթե մարդը չի կարողանում վնասագերծել այդ փաստերը, հոգեկանը լուրջ խնդիրների առջև է հայտնվում: Աղտոտված օդն ու ջուրը, թունաքիմիկատներով «համեմված» սնունդը, աղմուկն ու աղբը առաջացնում են մարդու մոտ ագրեսիվ վարք, հոգեբանական ճնշվածություն և լարվածություն: Ցրվածությունը, վատ հիշողությունը, անտարբերությունը ևս բնապահպանական խնդիրների հետևանք կարող են հանդիսանալ: Լեհ հոգեբանների ուսումնասիրությունները փաստում են, որ աղտոտված միջավայրում մեծացող երեխաների ինտելեկտուալ կարողությունները կարող են զիջել բարենպաստ միջավայրում ապրող երեխաների կարողություններին: Էկոգիտակցությունը անձի բարոյական հասունության հատկանիշն է այն իր մեջ ներառում է երեք կարևորագույն գործոն՝

- վերաբերմունք բնությանը
- վերաբերմունք սեփական անձին
- վերաբերմունք շրջապատող մարդկանց

Չոգեբանական հետազոտությունները վկայում են, որ մարդիկ, որոնք հակված են հարգելու և ընդունելու ուրիշ մարդկանց կարծիքը, խնայողաբար են վերաբերվում նաև բնությանը: Էկոգիտակցությունը ձևավորվում է դասիարակության շնորհիվ: Դրա պարզ օրինակից է, երբ մայրը սովորեցնում է երեխային չթափել աղբը փողոցում, այլ նետել այն աղբամանի մեջ:

# Էկոգիտակցության զարգացման տարիքային դինամիկան ըստ Ջեյմս Գիբսոնի դասակարգման

3-7 տարեկան	7-12 տարեկան	12-19 տարեկան	20-29 տարեկան	30-39 տարեկան	40-60 տարեկան
այն դեռ նոր ճանաչողական փուլում է գտնվում	ձևավորվում են բնությունը պահպանելու առանձին հմտություններ	միջգործոնային կապերի ստեղծում. աղբը աղտոտում է օդը, այդ օդը շնչում ենք մենք	այդ կապերը կարծես թե կրկին խզվում են	ամրապնդվում է բնություն-անձ կապը	կրկին վերարժեքավորվում բնությունը և նրա կարևորությունը սեփական անձի և կյանքի բերելավման համար

Այսպիսով, երեխաները այդ կարևոր կապի և գիտակցության միջնորդներն են հանդիսանում:


Մեր օրերում ակտիվ կիրառվում են Էկոգիտակցության զարգացման փորձերն տարրական դպրոցում: Դա բացատրվում է նրանով, որ այդ տարիքի երեխաները շատ հետաքրքրասեր են, ընկալունակ, կարեկցող և անկեղծ: Այդ տարիքում են ակտիվ ձևավորվում գիտելիքի ձեռքբերման, հույզերի ճանաչման, ընդունակաւթյունների վերհանման գործընթացները:

Մեր երեխաները, մեր հոգեկան առողջությունը, մեր մուլորակը մեր ձեռքերում են: Մարդ արարածը փոքրիկ կամուրջ է բնության և իր հոգեկանի միջև: Ըմբռնվել բնության բոլոր պարզււներն ու հրաշքները, թե կանգնել անդունդի եզրին՝ ընտրությունը մերն է, **Մարդունը...**

# Գլուխ 2.1 Եկոդաստիարակութունը և կրթութունը տարրական դպրոցում

1992թ. ապրիլի 15-ին Ռիո դե Ժանեյրոյում միջազգային կոնֆերանսի ժամանակ կարևորվեց մատաղ սերնդի բնապահպանական կրթության և դաստիարակության նշանակությունը՝ նպատակ ունենալով կանխելու ստեղծված Եկոլոգիական բարդ իրավիճակի կրկնությունը: Այդ օրվանից ամեն տարի ապրիլի 15-ին աշխարհի բազմաթիվ երկրներ նշում են Եկոլոգիական գիտելիքների օրը: Մարդու համար հիմնական արժեքները, բարոյական նորմերը ձևավորվում և ամրապնդվում են ամենավաղ տարիքում, որոնք էլ հետագայում բնության և շրջապատի նկատմամբ ճիշտ պահվածքի հիմքերն են դառնալու: Օրինակ Շվեդիայում 3 տարեկան երեխան տիրապետում է վարքի կանոններին. գիտի, որ կոնֆետի թուղթը չի կարելի նետել գետնին, որ աղբը պետք է զգել աղբամանը: Այդ երկրում նախադպրոցական հաստատություններում դասավանդում են «Աղբի տեսակավորում» առարկան, այդ աշխատանքները շարունակվում են հետագայում դպրոցներում և ուսումնական հաստատություններում: Այդ է պատճառը, որ այդ երկիրը համարվում է աշխարհի մաքուր երկրներից մեկը: Սա խոսում է բարձր Եկոլոգիական գիտակցության մասին: Այսօր հստակ սահմանված են բնապահպանական դաստիարակության և կրթության նպատակները, խնդիրները, սկզբունքները, միջոցները, մեթոդներն ու հնարները: Մեր երկրում կրտսեր դպրոցներում չի տարվում հետևողական աշխատանք Եկոլոգիական դաստիարակության ուղղությամբ, հետևաբար իմ ուսումնասիրության նպատակն էր նաև մշակել կրտսեր դպրոցականների համար բնապահպանական կրթության համակարգ, որը հնարավորություն կտա ավելի լավ գիտակցել բնապահպանական կրթության հնարավորությունները: Աշխատելով դպրոցում որպես ուսուցիչ՝ ես բախվեցի մի շարք խնդիրների.


## 1. Աշակերների վարքագծի խնդիր



Էքսկուրսիաների ժամանակ երեխաները կտորում են ծառերի ճյուղերը:



Տուն վերադառնալիս ետևում թողնում աղբը:



Աղտոտում բնությունը՝ առանց մտածելու հետևանքների մասին:



## Հաճախ Էքսկուրսիայից հետո հնչում են հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս անցավ էքսկուրսիան
- Ի՞նչն էր ուշագրավ
- Ի՞նչ տեսաք
- Ինչպիսի՞ն է տպավորությունն

### Բայց երբեք չեն հարցնում

- Ինչպե՞ս **պահեցին** իրենց բնության գրկում
- Հավեքեցի՞ն **թափած աղբը**
- Ինչքա՞ն **աղբ** էր կուտակվել
- Ինչպե՞ս ազատվեցին **աղբից**

Այս անցանկալի խնդիրների պատճառն դպրոցի ցածր Էկոլոգիական մշակույթն է: Իրականում երեխաները գիտեն՝ ինչպես դրսևորել իրենց բնության մեջ, կարող են ասել նաև, թե ինչու, բայց լինում է այնպես, որ միանգամայն այլ կերպ են իրենց պահում բնության գրկում: Որպեսզի ձևավորվի պատասխանատվության զգացում բնության նկատմամբ, հարկավոր է նրանց մատուցվող գիտելիքներին հաղորդել անձնական բնույթ և դրանք վերածել կիրառական գործունեության: Դրա համար պետք է լինել բնության մեջ, որպեսզի հասկանալ բնության վրա մարդու ոչնչացնող ազդեցությունը: Մանկավարժական գործունեության ընթացքում ես ցանկանում եմ լուծել այս խնդիրները՝ բարձրացնելով երեխաների Էկոլոգիական մշակույթը՝ նրանց ընդգրկելով ճանաչողական, ստեղծագործական և հետազոտական գործունեության մեջ: Բնապահպանական կրթության իմ աշխատանքը ես կառուցում եմ հետևյալ համակարգի համաձայն.

1. Ես աշխատում եմ երեխաների հետ
2. Ես աշխատում եմ ծնողների հետ
3. Ես համագործակցում եմ դպրոցի ուսուցիչների հետ
4. Կազմակերպում եմ արտադպրոցական աշխատանքներ

# Բնապահպանական կրթության միջոցառումների ծրագիր

Գործունեության ձևերը՝ ճանաչողական, հետազոտական, ստեղծագործական, գործնական

<b>1. Չրույցներ</b>	<b>Հիմնախնդիրներ</b>	<b>4. Գրական ունկնդրում, ընթերցանություն</b>	Բնաշխարհը գովերգող բանաստեղծություններ, ստեղծագորցություններ բնության վերաբերյալ
Ինչպես փրկել երկիր մոլորակը	Աղբակույտերի ավելացում	Վիկտորինա	Պահպանիր բնությունը և բնությունը կպահպանի քեզ
Աղբը և մարդը	Ջրի, օդի աղտոտում		Մնունդը պետք է լինի դեղ՝ դեղը՝ սնունդ
Ծառերի գանգատը	Անտառահատում	<b>5. Բնապահպանական նշաններ</b>	<b>Ծանոթանալ բնության կանոններին և նշաններին</b>
Լուռ ու մունջ մեր բարեկամները	Որսագողություն	Վարքագիծ և փոխհարաբարություններ	Ինչն է լավ, ինչը՝ վատ (դրական, բացասական սովորություններ) Կարող եմ, չեմ կարող
<b>2. Ուրախ ճանապարհորդություն բնության գիրկ</b>	<b>Էքսկուրսիաներ, արշավներ անտառ, պուրակ, գետի ափ</b>	Անվտանգություն	Հրաժարվել պլաստիկ շշերից, պոլիէթիլենային տոպրակներից
Օգնության ձեռքեր	Շաբաթօրյակներ, ծառատունկ, աղբի տեսակավորում, հեռացում	<b>6. Կապույտ մոլորակը</b>	<b>Հետազոտական աշխատանք</b>
Էկոլոգիական խաղեր	«7 չափիր, մեկ կտրիր» «Երբեմն, երբեք, միշտ»	<b>7. Բնության տոնահանդես</b>	<b>Ցերեկույթներ</b>
<b>3. Բնությունը և արվեստը</b>	<b>Բնական նյութերից, իրերի պատրաստում</b>		
Ցուցահանդես «Երկրորդ կյանք թափոններին»	Թափոններից ինքնաշեն խաղալիքների, դիդակտիկ նյութերի պատրաստում	<b>8. Էկոլոգիական թվեր</b>	Հետաքրքրաշարժ տեղեկություններ ֆիլմերի դիտում (ապրիլի 15, մարտի 22, սեպտեմբերի 29)
Երեկ աղբ, այսօր արվեստի գործ	Ծանոթանալ նշանավոր մարդկանց աշխատանքներին		

## Գլուխ 2.2 Ցանես սովորութիւն, կինձես բնավորութիւն:

Աշխարհում ավելորդ իրեր չկան: Մեծ ցանկութիւն և վառ երևակայութիւն դրսևորելու արդյունքում երեխաները ավելորդ իրերից (թափոն) ծնողների օգնությամբ ստացան հետաքրքիր աշխատանքներ, որոնք կարող են ծառայել որպէս խաղալիք, դիդակտիկ պարագա, հուշանվեր... Եկեք դառնանք բնութեան պահպանման առաջամարտիկներ, քայլ անենք դէպի մաքուր, ապահով ապագա ու սկսենք հենց վաղ տարիքից: Էկոլոգիան թող դառնա մեր հոգու մի մասնիկը:



# Գլուխ 2.3 Երեկ աղբ, այսօր՝ արվեստի գործ

- Անգլիացի նկարչուհին **ալլաստիկ աղբից** ստեղծել է Բարակ Օբամայի և Բրիտանիայի թագուհի՝ Ելիզավետայի դիմանկարները:



- Տայվանում աղբանոցից վերցված **1.5մլն. շշերից** կառուցվել է հսկա շենք: ճարտարապետական կառույցը ծառայում է որպես թանգարան:



- Չիլիացի դիզայներ Ռոդրիգո Ալոնսոն **վերամշակված ալլաստիկից** ստացել է սովորական աթոռ:

- Քանդակագործ Թոմ Տուչիյան, պատկերել է հունական առասպելների հերոս Ատլասին՝ գլորուսը ձեռքին, հսկ որպես իր աշխատանքի նյութ՝ նա օգտագործել է **վերամշակված այլոմիներ տարաներ, ալլաստիկ շշեր և, իհարկե, թուղթ:**



## Եզրակացություն

- ▶ Աղբը համարվում է տեխնիկական առաջընթացի արդյունք և որպեսզի հաջորդ սերունդը չապրի աղբակույտերի հարևանությամբ, պետք է համառ պայքար մղել կենցաղային աղբի անկառավարելի ավելացման դեմ:
- ▶ Բնական ճանապարհով աղբի տեսակավորման համար պահանջվում են տասնամյակներ, դա կախված է նրանից, թե ինչ նյութից է պատրաստված առարկան:
- ▶ Թափոնների վերամշակման համար անհրաժեշտ են աղբի տեսակավորման գործարաններ, որը պլանավորվում է մոտ ապագայում:
- ▶ Վերամշակումից հետո աղբը կստանա երկրորդ կյանք՝ պլաստիկից՝ թելեր, թղթից՝ նոր թուղթ ու ստվարաթուղթ:
- ▶ Ապացուցվեց, որ թափոնը ոչ թե զուտ աղբ է, այլ ռեսուրս, որը կարելի է վերամշակել, կրկին օգտագործել: Դա կնպաստի բնական ռեսուրսների պահպանմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը: Թափոններից գոյացած գումարները կուղղվի այլ կրթական ծրագրերի:
- ▶ Պետք է նպաստել բնակչության, երիտասարդ սերնդի բնապահպանական գիտելիքների, Էկոլարվելակերպի ընդլայնմանը, կրթական արշավները պետք է լինեն պարբերաբար:
- ▶ Ապացուցվեց, որ Էկոդաստիարակությունը պետք է սկսել մանկուց, հոգ տանել բնության մասին կարող է անգամ երեխան:

## Առաջարկություն

Այս թեմայով պետք է շատ խոսել: Ընտանիքներում, դպրոցներում, ուսումնական հաստատություններում պետք է ձևավորել աղբի տեսակավորման մշակույթ: Ցանկալի է, որ հանրապետության բոլոր վայրերում տեղադրվեն, թափոն-ամաններ, ընդլայնվի Էկո-ակումբների ցանցը հանրապետության բոլոր վայրերում: Սահմանել տուգանքներ, խիստ պատիժ՝ աղբը սխալ տեղում թափելու համար (այս հարցը դրված է քննարկման): Տարրական դպրոցում դասավանդվող առարկաների բովանդակության մեջ անտարակույս պետք է ներառվեն կրտսեր դպրոցականների բնապահպանական կրթությանը և դաստիարակությանը վերաբերվող ժամանակակից խնդիրները: Այս ամենին կարելի է հասնել միայն բազմառարկայական կապերի և գիտելիքների ինտեգրման միջոցով:

# Վարկածը ապացուցվեց

Եթե մեզանից յուրաքանչյուրը սկսի ճիշտ վերաբերվել աղբի խնդիրներին, ապա կնվազի աղբավայրերի քանակը, որոնք զբաղեցնում են նոր տարածքներ, և նրանց վրա կարող էին աճել բազմաթիվ մշակովի բույսեր:



# Վերջաբան

Ապագայի մարդը կատարյալ պետք է լինի բոլոր առումներով՝ գեղեցիկ, գիտուն, խելացի բարի, իսկ այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել երեք կարևոր խնդիրներ՝ նյութական բարիքներով ապահովվածություն, առողջություն, ֆիզիկական և հոգևոր զարգացում: Մարդկային հասարակության զարգացման այս բաղադրիչները հանդիսանում են հասարակության երջանկության ծառի խոր արմատները, որոնք աճում են հողի մեջ՝ բնության մեջ՝ ապահովելով նրա կյանքի կենարար հյուղը: Հասարակության յուրաքանչյուր անդամի զարգացումը սերտորեն կապված է մարդու էկոլոգիական մտածողության հետ, ինչը նաև հանդիսանում է մարդու կենսաձև: Դրանով են պայմանավորվում բնության հետ մարդու փոխհարաբեությունների սկզբունքները:

Մենք **բոլորս** ապրում ենք նույն մոլորակում, մենք նույն բնությունն ունենք, մեկ քաղաք, գյուղ, ավան:

Եկեք, **միահամուռ ուժերով** փոխենք մեր մոլորակի կյանքը, մեր փոքրիկ մոլորակը **դարձնենք մաքուր** և գեղեցիկ:

Պահպանի՛ր բնությունը և **բնությունը** կպահպանի քեզ:

# Բովանդակություն

---

- Ներածություն - 4
- Գլուխ 1 - Ընդհանուր տեղեկություններ աղբի մասին - 7
- Գլուխ 1.1 - Տարբեր տեսակի թափոնների քայքայման ժամանակահատվածը - 10
- Գլուխ 1.2 - Աղբի բացասական ազդեցությունը - 11
- Գլուխ 1.3 - Տեսակավորում և վերամշակում - 12
- Գլուխ 1.4 - Չարգացած երկրներում աղբի լուծման ճանապարհները - 14
- Գլուխ 1.5 - Աղբի խնդիրը Հայաստանում - 16
- Դիտարկումներ, սոցիալական հարցումներ, վերլուծություններ
- Գլուխ 2 - Բնապահպանությունն ու հոգեբանությունը - 22
- Գլուխ 2.1 - Էկոդաստիարակությունը և կրթությունը տարրական դպրոցում - 24
- Գլուխ 2.2 - Ցանես սովորություն, կինձես բնավորություն - 27
- Գլուխ 2.3 - Երեկ աղբ, այսօր՝ արվեստի գործ - 28
- Եզրակացություն, առաջարկություն - 29
- Վերջաբան - 30
- Օգտագործված գրականություն - 33



# Օգտագործված գրականության ցանկ

---

«Էկոլոգիական դասիարակությունը կրտսեր տարիքում» - Կրթական բարեփոխումների կենտրոն 2007թ.

«Երկրորդ կյանք իրերին» Ն.Պ. Կոնոպլեվա 1994թ.

[www.unicef.org](http://www.unicef.org) (Հայաստան) Հոդված «Ա՞ղբ, թե՞ թափոն. ինչ է վերամշակվում Հայաստանում»

[www.yerevan.am](http://www.yerevan.am) Երևանի քաղաքապետարան պաշտոնական կայք «Թափոնները վերամշակվում են» 15.03.2021

[www.hetq.am](http://www.hetq.am) «Կառավարելի և անկառավարելի թափոններ» 11.01.2020

[janep Perkins.co.uk](http://janep Perkins.co.uk) - Աղբից արվեստի գործեր

«Կյանքն առանց թափոնների» Անիտա Վանդայթ 2020թ.

Համացանց, ամսագրեր